Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

04.03.2019թ. ք.Աբովյան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Կ.Հովհաննիսյանս ուսումնասիրելով 04.03.2019թ. վերսկսված թիվ 04621046 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից «20» հոկտեմբեր 2017թ. տրված թիվ ԿԴ1/1213/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է Ռազմիկ Կամոյի Կարապետյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 387029 ՀՀ դրամ և տոկոսներ:

Պահանջատերը գրությամբ հայտնել է, որ պարտքը 01.03.2019թ. դրությամբ կազմում է 416.914 ՀՀ դրամ:

Պարտապանից բռնագանձել կատարողական գործողությունների կատարման ծախս բռնագանձման ենթակա գումարի 5%-ի չափով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Տ Ի

Պարտապան՝ Ռազմիկ Կամոյի Կարապետյանի կողմից գրավադրված ներքոհիշյալ գույքը

հ/հ	լոտի անվանումը, նկարագիրը	միավորի գնահատման գինը	միավորի մեկնարկային գինը	գույքի քանակը
1	Շղթա ՝ հարգը 580, քաշը 18.7 գրամ	224.400 դրամ	168.300 դրամ	1

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **harkadir.ajurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ **22.04.2019թ.:**

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում;

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրնքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը/լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի/լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ավագ հարկադիր կատարող
արդարադատության մայոր՝ _____ Կ. Հովհաննիսյան